ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/174

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Ա. Դերձյանի, Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, պատուհանների և դռների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10528-2021 գրությամբ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 22.06.2021թ.-ի թիվ Ե/40/1604-21 գրության հիման վրա, 28.06.2021թ.-ին «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 28.06.2021թ.-ին:

29.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/174 համարի ծածկագիրը:

07.07.2021թ.-ին և 23.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 07.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.07.2021թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 22.06.2021թ.-ի թիվ Ե/40/1604-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար դռների և պատուհանների ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով գնման ընթացակարգը, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ն:

Մասնակցության հայտի գնահատման արդյունքում՝ գնահատող հանձնաժողովի ս/թ մայիսի 14-ի թիվ 3 որոշմամբ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից թիվ 10, 11, 19 չափաբաժիններով և առաջարկվել է կնքել դռների և պատուհանների մատակարարման պայմանագիր:

Անգործության ժամկետի ավարտից հետո՝ մայիսի 26-ին, մասնակցի դիտարկմանն է ներկայացվել պայմանագրի նախագիծը, որի ստորագրված տարբերակը պետք է Պատվիրատուին ներկայացվեր 10 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն մասնակցի կողմից չի ներկայացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի գ) ենթակետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 45-րդ կետի համաձայն Ձեր դիտարկմանն ենք ներկայացնում «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումն հիմնավորող փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 08.07.2021թ.-ի թիվ Ե/40/1773-21 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրական» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար դռների և պատուհանների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով գնման ընթացակարգին ի թիվս մյուս մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ն, որի մերժման հիմքերը ներկայացված են թիվ Ե/40/1604-21 առ 22.06.2021 թ գրությամբ:

Հանձնաժողովի թիվ 3 առ 14.05.2021թ որոշմամբ հայտարարվել են ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21 գնման ընթացակարգի ընտրված մասնակիցները և ոչ ավտոմատ ծանուցման տարբերակով ծանուցվել են armeps համակարգի միջոցով:

Ի լրումն, հայտնում ենք, որ համաձայն ՀՀ Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի՝ «անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը», և համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 11 ենթակետի «էլեկտրոնային եղանակով

ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով»: Հետևաբար պայմանագրի նախագիծը մասնակցի էլեկտրոնային փոստին (lilitderdzyan@gmail.com) ուղարկելը համարվում է պատշաճ ծանուցում:

Ինչպես նաև համակարգողի կողմից բանավոր հեռախոսազանգով ստացվել է հավաստում պայմանագրի նախագծի ստացման վերաբերյալ:

«Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի այն պնդման, որ առկա են ստորագրությունների անհամապատասանություն, տեղեկացնում ենք, որ համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հունիսի 14-ի «Էդուարդ Մարտիրոսյանին Սլովակիայի Հանրապետություն գործուղելու մասին» N 952-Ա հրամանի՝ գլխավոր տնօրենի պաշտոնակար է նշանակվել «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր ճարտարագետ՝ Ա.Գրիգորյանը, ում ստորագրությունը նշված է եղել փաստաթղթում հավելյալ գծով, որը ընդունելի կարգ է փաստաթղթաշրջանառության մեջ: Մասնակցի կողմից չներկայացված փաստաթղթերը, արդյունքում նաև չմատակարարված ապրանքերը խափանում են ՀԱԷԿ-ում նախատեսվելիք աշխատանքները, իսկ ակնարկնումը՝ ստորագրության անհամապատասխանության մեջ անհիմն է:»:

3. <u>«Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10528-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 07.07.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «ՀԱԷԿ» ՓԲԸ (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ԼԻԼԻԹ ԴԵՐՁՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև նաև՝ Ցուցակ) ներառելու

նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՅ-ԼՕ-2021/174 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել գրություն (այսուհետև նաև՝ Գրություն) և գրությանը կից փաստաթղթեր (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1.1. 2021 թվականի ապրիլի 30-ին Պատվիրատուն www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով (այսուհետև նաև՝ էլեկտրոնային համակարգ) հրապարակվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհտև նաև՝ Մրցույթ):

1.2. Մրցույթի շրջանակներում 10-րդ, 11-րդ և 19-րդ չափաբաժինների մասով Մասնակիցը ճանաչվել է ընտրված մասնակից:

1.3. Գրավոր հիմքերին համաձայն՝ Մրցույթի շրջանանկներում պայմանագիր կնքելու առաջարկը Պատվիրատուն Մասնակցին է ուղարկել էլեկտրոնային փոստից: էլեկտրոնային համակարգից պայմանագիր կնելու առաջարկ (ծանուցում) Մասնակցին չի ուղարկվել:

1.4. Գրության համաձայն, այն ստորագրել է «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ Է. Մարտիրոսյանը, www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) հրապարակված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հետևյալ ծածկագրով պայմանագրերը՝ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20-01/328, HAEK-BMAPDZB-1/21-01/070, ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21-01/159, ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-42/21-01/092, ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-90/21-01/149 և 01/032 միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումներում «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ Է. Մարտիրոսյանի ստորագրությունը ակնհայտ տարբերվում են Գրության մեջ դրված ստորագրությունից: Ինչը թույլ է տալիս փաստել, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ Է. Մարտիրոսյանի փոխարեն Գրությունը ստորագրել է մեկ այլ անձ:

2.1. ՀՀ կառավաության 2017 թվականի ապրիլի 6-ի թիվ 386-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 1-ին կետի, 5-րդ կետի 1-ին ենթակետի, 7-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի համաձայն.

«1. Սույն կարգով կարգավորվում են էլեկտրոնային ձևով գնումների կատարման հետ կապված հարաբերությունները:

5. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) համակարգ՝ www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգ

7. Մասնակիցը, գնումներին մասնակցելիս, իրավունք ունի էլեկտրոնային եղանակով՝

2) ստանալու ծանուցում.

20. Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:»:

Մրցույթի հայտարարության 1-ին պարբերության հաածայն. «Պատվիրատուն«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, (...), գնանշման հարցում, որն իրականացվում է (...)՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Իսկ Մրցույթի հրավերի 1-ին մասի 8.18 կետի համաձայն՝ պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով:

Վերոգրյալից հետևում է, որ գնման ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակցին Պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցումը պատվիրատուն ուղարկում է armeps.am համակարգի միջոցով: ՈՒստի մասնակիցը համարվում է պատշաճ ծանուցված միայն այն դեպքում, երբ պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցումը մասնակցին է ուղարկվել armeps.am համակարգի միջոցով: Այսինքն, եթե ծանուցումը չի ուղարկվել armeps.am համակարգի միջոցով, ապա Մասնակիցն այդ հանգամանքի վերաբերյալ համարվում է չծանուցված, որպիսի պայմաններում Պայմանագիրը օրենքով սահմանված ժամկետում կնքելու և պատվիրատուին ներկայացնելու պարտականություններ Մասնակցի մոտ չեն կարող առաջանալ: Բացի այդ, պայմանագիրը էլեկտրոնային համակարգի միջոցով չուղարկելով պատվիրատուն խախտում է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի թիվ 386-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը և 20-րդ կետը:

Նշենք, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումներում արտահայտված դիրքորոշումներին համաձայն՝ հրավերով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգի միջոցով ծանուցում ուղարկել նախատեսելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը և հետապնդում է իրավական

որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության միջոց:

Այսպիսով, սույն գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Գրավոր հիմքերում բացակայում են պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցումը armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ուղարկելու վերաբերյալ փաստերը, ինչը ողջամտորեն ենթադրում է, որ այդ ծանուցումը Մասնակցին էլեկտրոնային համակարգի միջոցով չի ուղարկվել: Ուստի կարող ենք փաստել, որ պայմանագիրը կնքելու և կնքված պայմանագիրը օրենքով սահմանված ժամկետում Պատվիրատուին ներկայացնելու վերաբերյալ Մասնակիցը պատշաճ չի ծանուցվել, որտեղից էլ հետևում է, որ Մասնակիցը այդ հանգամանքի վերաբերյալ համարվում է չծանուցված: Հետևաբար, նշյալ պայմաններում պայմանագիրը օրենքով սահմանված ժամկետում կնքելու և պատվիրատուին ներկայացնելու պարտականություններ Մասնակցի մոտ չէր կարող առաջանալ:

Ելնելով վերոգրյալից կարծում ենք, որ Ընթացակարգի շրջանակներում Մասնակցին չի կարող վերագրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերությամբ նախատեսված խախտում: Ավելին՝ նշյալից ստացվում է, որ Ընթացակարգը նախաձեռնելու պատճառը ոչ թե Մասնակցի, այլ Պատվիրատուի կողմից թույլ տված խախտումն է:

2.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դ. ենթակետի համաձայն՝ պատվիրատու է համարվում պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը՝ 2) օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ», «դ», «ե», «զ» և «է» պարբերություններում նշված կազմակերպություններում գործադիր մարմնի ղեկավարն է:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից Գրությունը կազմվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանի անունից, սակայն Է. Մարտիրոսյանի փոխարեն գրությունը ստորագրել է մեկ այլ անձ: Ավելին՝ գրությունից պարզ չէ անգամ ստորագրող անձի ինքնությունը: Ուստի կարծում ենք, որ Ընթացակարգը անհրաժեշտ է մերժել, քանի որ Մրցույթի շրջանակներում Մասնակցի թույլ տված ենթադրյալ «խախտման» մասին ՀՀ ֆինանսների նախարարություն է հայտնել ոչ թե նման իրավասություն ունեցող անձը, այլ մի անձ ում ինքնությունը անգամ պարզված չէ, այն

պարագայում երբ այդ անձը հանդես է գալիս «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն է. Մարտիրոսյանի անունից։»:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-LO-2021/174 ծածկագրով ընթացակարգը ամբողջությամբ մերժել:

4. <u>ՍՑ-LO-2021/174 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից պատուհանների և դռների ձեռքբերման նպատակով 30.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 10-րդ, 11-րդ և 19-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ն:

iv. 19.05.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

v. Պատվիրատուն, 26.05.2021թ.-ին marine.hakobyan@anpp.am էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով Մասնակցի lilitderdzyan@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է պայմանագիրը ներկայացնել 2 օրինակից, միաժամանակ տեղեկացնելով, որ

պայմանագրի հետ մեկտեղ անհրաժեշտ է ներկայացնել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

vi. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

vii. Բողոքներ քննող անձը 12.07.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/17007-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից վերոնշյալ գնման ընթացակարգի շրջանակներում armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել են ծանուցումներ, թե՝ ոչ, և եթե ծանուցումն ուղարկվել է, ապա «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի կողմից ծանուցումները ստացվել են, թե՝ ոչ:

viii. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.07.2021թ.-ին թիվ Ն/26-1/17446-2021 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի՝ «Armeps» համակարգում գրանցած lilit.derdzyan@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 12.05.2021թ.-ին ժամը 16:33-ին և 17.05.2021թ.-ին ժամը 16:03-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ նամակներ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.06.2021 թ.-ի թիվ 26/26-1/10528-2021 գրությամբ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից պատուհանների և դռների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտարարել է գնանշման հարցման ընթացակարգ, որն իրականացվելու է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Հրավերի 8.18-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից պատուհանների և դռների ձեռքբերման նպատակով 30.04.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 10-րդ, 11-րդ և 19-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ն, ինչի արդյունքում վերջինիս առաջարկվել է կնքել պայմանագիր:

Պատվիրատուն, 26.05.2021թ.-ին marine.hakobyan@anpp.am էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով Մասնակցի lilitderdzyan@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին

ներկայացնելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է պայմանագիրը ներկայացնել 2 օրինակից, միաժամանակ տեղեկացնելով, որ պայմանագրի հետ մեկտեղ անհրաժեշտ է ներկայացնել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

Բողոքներ քննող անձը 12.07.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/17007-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից վերոնշյալ գնման ընթացակարգի շրջանակներում armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել են ծանուցումներ, թե՝ ոչ, և եթե ծանուցումն ուղարկվել է, ապա «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի կողմից ծանուցումները ստացվել են, թե՝ ոչ: Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.07.2021թ.-ին թիվ Ն/26-1/17446-2021 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի՝ «Armeps» համակարգում գրանցած lilit.derdzyan@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 12.05.2021թ.-ին ժամը 16:33-ին և 17.05.2021թ.-ին ժամը 16:03-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ նամակներ:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հրավերի 8.18-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են, որ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Ընդ որում՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցում ուղարկել նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը, և վերջապես՝ հետապնդում է

իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ 02.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ հայտնել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:

Սահմանադրական դատարանը 18.04.2006թ.-ի թիվ ՍԴՈ-630 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է, որ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից պատուհանների և դռների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին պայմանագիր կնքելու նպատակով որևէ ծանուցում չի ուղարկվել, այլ ուղարկվել է քարտուղարի՝ marine.hakobyan@anpp.am էլ. հասցեից, ինչը չի բխել Հրավերի 8.18-րդ կետի դրույթներից, քանի որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸը հայտարարել է գնանշման հարցման ընթացակարգ՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով, ըստ այդմ՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումները պետք է ուղարկվեն համակարգի (armeps.am՝ ոչ ավտոմատ ծանուցում) միջոցով, այլ ոչ թե քարտուղարի էլ. հասցեով: Ընդ որում, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.07.2021թ.-ին թիվ Ն/26-1/17446-2021 գրությամբ հավաստել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 26.05.2021թ.-ին ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղերձ նամակներ չեն ուղարկվել:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ պայմանագիր կնքելու վերաբերյալ Մասնակցին պատշաճ ծանուցելու համար, անհրաժեշտ է այդ ծանուցումը Մասնակցին ուղարկել armeps.am համակարգի միջոցով: Հետևաբար, եթե ծանուցումը չի ուղարկվել armeps.am համակարգի միջոցով, ապա Մասնակիցը այդ հանգամանքի վերաբերյալ համարվում է չծանուցված, որպիսի պայմաններում որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու և պայմանագիր կնքելու պարտականություններ Մասնակցի մոտ չեն կարող առաջանալ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ն ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ՝ ուղղված պայմանագիր կնքելուն, պայմանագրի ու որակավորման երաշխիքները ներկայացնելուն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (Հանձնաժողովի քարտուղարի կողմից Հրավերի 8.18-րդ կետերով սահմանված պարտադիր պահանջների խախտմամբ պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին, որպիսի պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.06.2021 թ.-ի թիվ 26/26-1/10528-2021 գրությամբ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/174 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**